



Բ Ա Ր Ո Ջ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ

(Խոսված 1953 թվականի Տյառնընդառաջի
տոնին, էջմիածնի Մայր տաճարում)

«Եյս ի յայտնութիւն հերանոսաց,
և փառս ժողովրդեան Բում Խաթելի»:

ՂՈՒԿԱՍ, Բ 32:



ույսի և մանկության տոնն է այ-
սօր դերազանցապէս, լուսատուն
որը սերտորեն կապված է մա-
նուկ Հիսուսի քառասնօրյա Ս.

Տաճար գալու կարևոր իրադարձություն:

Լույս է ամեն կողմ: Եկեղեցին պայծա-
ռորեն ջահադարձված է այսօր ավելի քան մի
այլ տերունի տոն օր. լույս է երգվում այ-
սօրվա հատուկ շարականների և հոգեզմայլ
տաղերի մեջ, զվարթ լույսեր են վառվում
հավատացյալների ձեռքերում: Այդ լույսե-
րով վառեցիք երեկ ձեր տան ճրագները,
որպեսզի ամբողջ տարին շին ու պայծառ
մնան հավատի ու հայրենի սրբությունների
լույսերը, ինչպես Աստուծո լուսազարդ խո-
րանների առաջ, այնպես էլ ձեր տներում:

Տյառնընդառաջ է այսօր: Մեր Փրկիչը,
քառասնօրյա մանուկ, Տաճար է բերվում
ընծայվելու Հոր Աստուծո և «կատարել զծ-
րէնս վասն փրկութեան հեթանոսաց»: Դուք
էլ, ի՞մ քրիստոնյա մայրեր և քույրեր, ըստ
հայրենավանդ հին ու բարի սովորություն-
ների, փութացել եք այս սուրբ, պատմական
ու նվիրական Մայր Տաճար՝ Աստուծո
սուրբ սեղանի առաջ աղոթելու:

Յուրաքանչյուր մանուկ, որ իր աչքերը
նոր է բացում կյանքին, նոր լույս է բերում
իր շրջապատին և փառքն է հանդիսանում
իր ծնողների համար. յուրաքանչյուր մանուկ
մի տան ճրագ է, մի օջախի կրակ է: Ման-
կությունը՝ հույսն ու լույսն է ժողովուրդնե-
րի: Ազգերը, ժողովուրդները միշտ գուրգու-
րանքով, մեծ սիրով և շրջապատել ման-
կությանը: Քրիստոսն էլ եղել է մանուկ ձեր
երեխաների նման ու մեծացել է Շնորհօք և
իմաստութեամբ Աստուծոյ:

«Աստուած լոյս է և խաւար ի նմա չիք և
ոչ մի» (Ա Հովհ., Բ 5):

Քրիստոսի ապրած դարաշրջանում աշ-
խարհն ապրում էր քաղաքական, հասարա-
կական, կրոնական խորը ճգնաժամ: Առե-
րևելթ կուլտուրական, գաղափարական «վե-
րածնության» թիկունքում թաքնված էր փա-
ռամուլ հասարակության հատուկ կյանքի
անբովանդակությունը: Ժամանակակից աշ-
խարհը թաղված էր խորը մեղքի, տգիտու-
թյան, նախապաշարոնի, հուսահատության
մեջ: Մարդկությունը կորցրել էր իր ճանա-
պարհը: Սակայն որքան տխուր էր պատկե-
րը կայսերական հասարակության, այնքան

մեծ էր տրտապալալ մարդկության հույսը իր հոգեւոր զարթոնքի, փրկութեան մասին:

Եվ «ի լուսնն ժամանակաց» հայտնվեց ազգերի ու դարերի ճանապարհը լուսավորող մեծ լույսը՝ «Լույս ի յայտնութիւն հեթանոսաց»: Հիսուսը փրկութեան այն լույսն է, որ ծագեց իր դարն ապրած հին աշխարհի հորիզոնի վրա: Նա իր փրկարար լույսով բացեց հին աշխարհի և հասարակութեան նախապաշարունակութիւն, մեղքով, տգիտութեամբ խավարած աշխարհը — «Եփփա՛թա, որ է բացուի՛ր» — տեսնելու ճշմարիտ լույսը, Աստուծո գերազանց և անվիճելի հայտնութեանը և ապրելու այդ փրկարար լույսի կյանքով, այդ լույսի սկզբունքներով: Քրիստոսը աշխարհի, կյանքի լույսն է. «Մինչդեռ յաշխարհի եմ, լույս եմ աշխարհի» (Հովհ., Թ 5):

Այսպէս, կյանքի, պատմութեան խավարը լուսավորող մեծ լուսարձակն է Քրիստոսը, որն աշխարհ է եկել լուսավորելու մահկան, խավարի, տգիտութեան, մեղքի մեջ խախտողներին, փարատելու խավարի թանձր մառախուղը և հայտարարելու ազգերի եղբայրութեան և Աստուծո հայրութեան վսեմ գաղափարները: Մարդկային ծով տառապանքի հանդեպ, մեղքի, խավարի հանդեպ, Քրիստոս լցված է ամենախորունկ կարեկցութեամբ, մարդկայնութեամբ: Նրա երկրավոր կյանքը, Բեթղեհեմի անշուք մսուրից մինչև Գողգոթայի արյունոտ բարձունքը, մարդկության բարիքին և ազնվացման նվիրված, անպատում զոհաբերութեան և նվիրումի սրտառուլ դյուցազներգութեան է հանդիսացել:

Քրիստոսի ծննդից 40 օր հետո, Մարիամը, իբրև բարեպաշտ ու հավատացյալ մայր, նրան տարավ Տաճար՝ «յանդիման առնել Տեառն»:

Տաճարի սեմին, ի՞մ հավատացյալ մայրեր և քույրեր, մեր մահկանացու աշխարհն պարզվում է մի սրտառուլ, վսեմ պատկեր: Տաճարը լիքն է բազմութեամբ: Շնորհագեղ դեռատի մայրեր, հպարտութեամբ գրկած իրենց անդրանիկ երեխաներին, բերում էին նրանց Տաճար՝ Աստուծուն նվիրելու Բազմութեան մեջ է նաև մի պատկառելի ծերունի, որ «էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն

Սրբոյ մի՛ տեսանել զմահ՝ մինչև տեսցէ զՕծեալն Տեառն»: Սիմեոն ծերունին է դա, սրտառուլ ու խորը հավատի մարմնացումը: Ամեն օր լուսածագին նա շտապում է Տաճար և ուխտավոր բազմութեան երեխաների մեջ փնտրում իրեն խոստացված Տիրոջ օծյալին: Քանի՞ քանի՞ սիրունիկներ էին անցել նրա աչքերի առաջ, բայց նա չէր տեսել Տիրոջ Օծյալին: Հազարավոր նորածին մանկանց աստղագիր՝ նայվածքում նա ցանկացավ կարդալ Տիրոջ գրած խոստումը, բայց իզուր: Ամեն օր Տաճարը լցվում ու դատարկվում էր նոր երեխաներով, բայց նրանց մեջ չէր Սիմեոն ծերունու փնտրածը:

Մեծ էր սակայն նրա հավատը Աստուծո վրա: Իսրայելի պատմութեան սեմի վրա հանդիպում ենք մեծ հավատավորին՝ Աբրահամին՝ «Հաւատոյ հօր», որը նույնիսկ չի վարանում սուրը մխելու իր սիրուն մեջ, բարձրագույն կամքին հնազանդելու համար: Գերագույն հավատի անզուգական օրինակն է Աբրահամը: Եվ Աբրահամը միակը չէ: Նահապետները, մարգարեները, տեսանողները հանդես են գալիս իբրև հավատի դյուցազունները, «որք հաւատով գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց»: Գրանցից էր նաև վերջին մեծ հավատավորը՝ Սիմեոն ծերունին, որն իր մեջն է կրում ժողովրդին խոստացված փրկութեան և ազատութեան դարավոր խոստումների հույսը: «Մի՛ տեսանել զմահ՝ մինչև տեսցէ զՕծեալն Տեառն»: Այս հավատով սնվում, ապրում ու շնչում է Սիմեոն ծերունին: Քանի՞ քանի՞ խաղաղ գիշերներ, խորը լուսեան մեջ, նա իր հավատավոր աչքերը մեծ ափնակալութեամբ հռել է արեւելքի աստղազարդ ու խորհրդավոր երկնքին, սրտատրոփ սպասել այն վճռական ու ճակատագրական րոպեին, երբ «ծագեաց աստղն Յակոբայ»: Ժամանակը, ուր ապրում է Սիմեոնը, չար է, ու մարդիկը՝ վատ: Կայսերական Հռոմի լեգեոնները երկաթե բռունցքի տակ էին պահում Հրեաստանը: Երբեմնի ազատ, բարգավաճ ժողովուրդը գերի էր և շղթայակալ: Հրեաստանը վաճառված էր Հռոմին՝ իր դավաճան իշխանների և քահանաների կողմից: Տաճարը մերկացել էր իր հոգեւոր կոշովից և ավազակների որջ էր դարձել:

Սիմեոնի նման հավատավոր մարդիկ հույսը դրել էին Եհովայի, Երկնքի օրհնության վրա: Մեծ էր նրանց հավատը: Ուշանում էր Տիրոջ Օծյալի հայտնությունը. օրերի հետ աճում, մեծանում էր սակայն նրանց հավատը:

Հուլյսով, հուզումով դիտում էր նա ամեն օր, իր աչքերի առաջ մայրերի ուրախ տոգանքը... և ահա օրերից մի օր, այն պահին, երբ Մարիամը քառասունքի առթիվ մի զույգ սատրակով մտնում է հինավուրց Տաճարի սեմից ներս, երկնային ազդեցությամբ, ըստ ավետարանի անսուտ վկայության, Սիմեոն ծերունին էլ «Եկն Հոգւովն ի Տաճարն»: Մերունու աչքերը, բազմաբղետ ամբոխի մեջ, կանգ են առնում մի համեստ կնոջ վրա, նա համարձակ մոտենում է անծանոթ կնոջը, բացվում են նրա տարիներով կուղպ շրթները, աչքերը ճառագայթում են ուրախությունից, նման այն մարդու, որն անսպասելի մի մեծ գանձ է գտել. նա չի զգում իր ուներին ծանրացող տարիների բեռը, և իր գողդոջ, անարյուն բազումների մեջ է վերցնում Լույսը: «Ընկալաւ զնա ի գիրկս իւր», հռչակում է Մանկան մեծությունը — այդ Մանուկը պիտի լինի Աստուծո պատրաստած փրկությունը, հեթանոսների լույսը: «Խայտա՛յր ալեօքն ծերունին Աստուածորդւովն ի գիրկս իւր»: Մի պահ երիտասարդական ավյունով թարմանում է գերեզմանի եզրին հասած հավատավոր ծերունին. այնքան մեծ է եղել նրա անխար հավատը իր ժողովրդի ազատության, փրկության մասին: Այժմ ինքը կարող է խաղաղ խղճմտանքով, բավարարված, գերեզման իջնել, ողջունելուց հետո Հակոբի Աստուղի պայծառ լուսածագը:

Այսպիսի ուրախություն էր վերապահված Սիմեոնին: Նա գրկեց, շոշափեց հեթանոսների Լույսը, իր ժողովրդի փառքը:

Բայց Լույսից զուրկ մնաց Իսրայելը: Տաճարի շրջապատում անարձագանք մնաց Սիմեոն ծերունու Լույսի մեծ քարոզը:

Իսրայելը չգնահատեց երբեք Աստուծո կողմից տրված այսքան առատ շնորհների և նյութական բարիքների արժեքը: Իր պատմության առաջին իսկ օրերից, նա ապերախորդանվեց Աստուծո և իր բարերարների դեմ: Հազիվ ազատված եգիպտական գերություն-

ներից Եհովայի կամքով, իր տրտունջի անիրավ ձայնը բարձրացրեց իր մեծ ազատարար Մովսես մարգարեի դեմ, մոռացավ հին վշտերը և հիշեց միշտ եգիպտոսի սոխն ու սխտորը: Քարկոծեց, սղոցեց, մատնեց ու հալածեց իր ազատարարներին: Հաճախ մոռացավ Եհովային, խառնակվեց հեթանոսների հետ ու ապականվեց: Ծշմարիտ Աստուծո Տաճարը եղավ «տեղի պաշտաման Բահադու»:

Նա՛ Իսրայելը, իր կազմակերպության մեջ շճանաչեց նաև խոստացված Մեսիային: Մեսիան եկավ նրա համար. «Յիրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան» (Հովհ., Ա. 11):

Տաճարում անարձագանք մնաց նաև Սիմեոնի մարգարեությունը, ինչպես անարձագանք էին մնացել Նաայիի, Միքիայի, Զաբարիայի և մյուս մարգարեների մեսիական պատգամները:

Մագեց Լույսը Հրեաստանում, սակայն հոգեպես կույր էր Իսրայելը. նա չտեսավ Լույսը, որպեսզի բժշկվի: Վիրավոր աչքերով կարելի չէ լույսին նայել (Մատթ., ԺԳ. 15): «Լո՛յս տուր, Տէ՛ր, աշաց իմոց, զի մի՛ երբեք ննջեցից ի մահ» (Սաղմոս ԺԲ, 4):

Բայց հեթանոսները տեսան այդ Լույսը և փրկվեցին. «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց»: Քրիստոսի փրկարար ու կենարար լույսին հավատացող առաջին ժողովուրդներից մեկն է եղել նաև հայ ժողովուրդը: Քրիստոսի անմիջական առաքյալները և մեր հայրենի առաջին մեծ լուսավորիչները՝ Թադեոսն ու Բարդուղիմեոսը Հայաստան աշխարհ՝ բերեցին ավետարանի լույսը՝ «ի յայտնութիւն» հեթանոս հայության:

Հայ ժողովուրդը, մեր ժողովուրդը, աշխարհի ամենահին ու քաղաքակիրթ ժողովուրդներից մեկը, իր ողջ պատմության ընթացքում ձգտել է լուսավորության. լո՛ւյս, ավելի՛ լույս. ահա ա՛յս է եղել նրա դարավոր ձգտումը:

Ամեն անգամ երբ այս պատմական Եկեղեցին եմ մտնում, Քրիստոսի լույսով ու շնչով թաթավուն այս սրբավայրը, որը փրկության նավահանգիստ է հանդիսացել անցյալում մեր դժբախտ ժողովրդին, մտքով զուգակշիռ եմ անցկացնում անցյալում Սիմեոն ծերունու և ազգիս ալեհիտ Հայրապետի

միջև: Երկու պատվական ծերունիներ, հավատքի տիպարներ: Նմանություն շատ եզրեր կան նրանց մեջ: Վեհափառն էլ Սիմեոնի նման հավատով սպասում էր մի ժամանակ իր ժողովրդի, հայ ժողովրդի փրկության: Հասավ այդ երջանիկ ժամը: Մովսես շտեմալ ավետյաց երկիրը, ու մեռավ պանդխտության մեջ: Սիմեոն ծերունին իր ժողովրդի փրկության հույսը միայն գգվեց: Վեհափառն իր սեփական աչքերով ոչ միայն տեսավ իր ժողովրդի, իր Հայրենիքի ազատությունը, փրկությունը, այլև այժմ ականատես է նրա վիթխարի զարգացմանն ու վերելքին:

«Խաչատուր ալեօքն ծերունին»։ որքա՛ն է տեղին շարականի այս պատկերը Վեհափառի համար: Այսօր, մեր ազատագրված ժողովուրդը, խաղաղ կյանքի պայմաններում, աշխատանքային մեծ սխրագործությունները բուրաստանի է վերածում, լույսի, կյանքի, հոյակապ նյութական, կուլտուրական կոթողներ է ճարտարապետում, «ի փառս ժողովրդեան քոմ հայութեան»:

Ի տես իր սիրելի ժողովրդի հոգևոր, բարոյական, կուլտուրական զարթոնքի, հայրենասեր հայրապետը, Սիմեոն ծերունու սուրբ շնչով, պատգամում է իր հավատացյալ զավակներին, իր հոգու ամբողջ համոզմունքով, հայրենասիրությունը. «Հայր բացի

Սովետական Հայաստանից, չունի այլ Հայրենիք: Հայր Հայաստանից բացի չունի այլ հաստատուն կովան, բացյ եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին, և նրա զխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. էջմիածնի հայրապետական աթոռով»:

Ի՞մ հավատացյալ մայրեր ու քույրեր, այսօրվա ջահավառությունը, լուսավորությունը, այս բոլոր արտաքին լույսերն ու հանդիսավորությունները արժեք չունեն, եթե խավար է հոգին: Պետք է վառ պահել հոգու լույսը աշխարհում: «Դուք ամենեքեան որդիք լուսոյ էք» (Ա. Թեաաղ., Ա 5):

Այսօր, ավելի քան մի այլ ժամանակ, աշխարհը պետք ունի լույսի: «Դու ես լույսն գովելի, սուրբ և առաջին լույսն, ի քէն փախնու խաւարն, և զլույս քո կենդանի, Տէ՛ր, ծագեա՛ ի սիրտս մեր»:

Աշխարհ այսօ՛ր մանավանդ պետք ունի լույսին, ճշմարտության, պայքարելու համար խավարի ուժերի դեմ, նոր պատերազմի սարսափների դեմ: Այսօր, լույսն ու խավարը, խաղաղությունն ու պատերազմը, սերն ու ատելությունը կանգնել են դեմ-դեմի: Մարդկությունը լուսավորելու համար, անհրաժեշտ է, որ նորից հնչի Սիմեոն ծերունու պատգամը՝ «Լույս ի յայտնութիւն հեթանոսաց»:

Եվ լույսը կհաղթի խավարին, խաղաղությունը՝ պատերազմին, սերը՝ ատելության:

